կան[1] պարտէզքն: 16 Ունի գաւառս մետասան[2],
յորոց մինն Լուք կոչի: 17 Ունի եւ կղզիս երկուս[3],
գետս երիս[4], որ ի մի եկեալ՝ անուանին Ալաթոն
եւ մտանեն ի ծով, եւ լիճ մի, որ կոչի Կիւառիա:
18 Ունի եւ քարայրս Լասինիկաց[ւ]ոց[5], յորում են
նորակերպ գազանք, որք են մարդակերք՝ կեն-
[տ]աւռոս[6], որո[յ] ագին թռչնո[յ] նման է, լինգ-
նաս, սպուռինք[7], արջամկունք եւ այլ բազում
սքանչելի գազանք:

19 [8]Ե. Մարմառականք[9] [14ա] Լիբիա եւ ա-
մենայն յԵգիպտոս[10] ի մի աշխարհ է համարեալ:
20 Յելից կա[յ] Կիւռենականին[11], հոմանուն պե-
ղագոսին, ցԱնթիթոն քաղաք, որ կա[յ] ի մէջ ծո-
վեզերն Ռինոկորուրա[յ] եւ Ասկալոնի, եւ անդի
յարեւմտեա[յ] խորշն երկճիղ Կարմիր ծովուն՝
հանդէպ Քաջաց քաղաքի: 21 Ունի լերինս երկո-
տասան[12], յորոց մինն կոչի Ծիրանական: 22 Ու-
նի գուբս երկուս[13] շինուածոյս եւ լիճս երիս[14]
ինքնելս[15]. են եւ երիս[16] լիճս այլ, զոր Նեղոսի
վտակքն առնեն. յորոց մինն հուպ է Մեծն Աղէք-
սանդրիա[յ][17], որ կոչի Ռաւանիտէնիա[18], զոր
կարծեմ՝ զՄարեա[յ] լիճն լինել: 23 Բայց գետ ու-
նի յԵգիպտոս[19] մի՝ զՆեղոս, որ է Գեհոն[20]. բղխէ ի
Լուսնի լեռնէ՝ առ Անծան<u>աւ</u>թ երկրի հարաւո[յ], եւ
դէպ ուղիղ գնալով ի յԵգիպտոս[21]՝ առնէ ի նմա
չորս[22] կղզիս, եւ բաժանի ապա ի բազում վտա-
կս, որք դարձեալ միացեալ՝ առնեն կղզիս բազու-
մս եւ զառաջասացեալ լիճսն. եւ մին զատուցեալ
անկանի[23] յՆռոպոլիտիտոս ծոց, որ է արեւմտա-
[յ]ին խորշ Կարմիր ծովուն. եւ զայ[լ]ս[24] վտակսն՝
ի Յունաց ծով: 24 Ունի յԵգիպտոս[25] գաւառս քա-
ռասուն եւ մի[26] [եւ քաղաքս բազումս, եւ
մայրաքաղաք՝ զմեծն Աղէքսանդրիա][27]. միւ-
սն Տանիս[28] կոչի: 25 Եւ առ Կարմիր ծ[14բ]ովովն
Արաբաց[ւ]ոց[29] ծոցովն բնակեն Ջկնակեր ազգն,
որ կոչին Արաբ Եգիպտացիք: 26 Ունի յԵգիպ-
տոս[30] կղզիս մանունս մետասան[31] [ի][32] Յունաց
ծովուն, յեզեր հոմանուն պեղագոսին, [եւ ի

---

1 *S* Երեկորնական *փխ* Երէկորնական *(V)*
2 *V* ծա
3 *V* բ, *S* երկու *փխ* երկուս *(վեր., հմմտ. նախ. Ա.27, Բ.37, Գ.47, Դ.30, Ե.88)*
4 *V* գ
5 *V* Լասինիկացոց *փխ* Լասինիկացւոց *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*
6 *V* կենռոոս *փխ* կեն[տ]աւռոս *(վեր. Երեմեանի. տե՛ս բանաւոր* **ԱՒ/Օ → Ո**. *Սուքրեանի ծնթ-ը՝* «Թուի կենդաւրոս, իշացուլն ի մեզ թարգմանեալ»*)*
7 *Սուքրեանի ծնթ-ը՝* «Գոյ առ նախնիս մեր յիշատակեալ Ապուռ գազան, թերեւս սա իցէ» *(այսպիսով, գուցէ՝* **ա**պուռինք*՞)*
8 *Ըստ Երեմեանի՝ վերակ-նելի է ենթավերնագիր.* «Ցաղագս Մարմարական Լիբիոյ եւ Եգիպտոսի»
9 *V* գազանք մարմառականք: Ե. *փխ* գազանք: Ե. Մարմառական *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառ.)*
10 *V* յԵգիպտոս *փխ* Եգիպտոս *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Բ.5, 17, Դ.25, 37 եւն)*
11 *VS* Կեռինականին *փխ* Կիւռենականին *(վեր.՝ ըստ նախորդի, տե՛ս նախ. Դ.15)*
12 *V* բժ
13 *V* բ, *S* երկու *փխ* երկուս *(վեր., հմմտ. նախ. Ա.27, Բ.37, Գ.47, Դ.30, Ե.88)*
14 *V* գ
15 *S* ինքնեղս *փխ* ինքնելս *(V)*
16 *V* գ
17 *S* [ի] մեծն Աղեքսանդրիա *փխ* Մեծն Աղէքսանդրիա[յ] *(V. սեռական հոլովով ընկալելով՝ խուսափում ենք* հուպ*-ից յետոյ Սուքրեանի օրինակով* «ի» *նախդիր վերականգնելուց)*
18 *S* Ռաւանիտենիա *փխ* Ռաւանիտէնիա *(V)*
19 *V* յԵգիպտոս *փխ* Եգիպտոս *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Բ.5, 17, Դ.25, 37 եւն)*
20 *Ըստ Երեմեանի՝* «որ է Գեհոն»*-ը ուշ յաւելում է, բայց հմմտ. նախ. Ե.272՝* «որ թուի, թէ Փիսոն է»
21 *V* յԵգիպտոս *փխ* Եգիպտոս *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Բ.5, 17, Դ.25, 37 եւն)*
22 *V* դ
23 *VS* անգանի *փխ* անկանի *(վեր.՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Ե.58, 307)*
24 *V* զայս, *S* զայլ *փխ* զայ[լ]ս *(վեր.)*
25 *V* յԵգիպտոս *փխ* Եգիպտոս *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Բ.5, 17, Դ.25, 37 եւն)*
26 *V* խա
27 *VS չիք* եւ քաղաքս ... Աղէքսանդրիա *(2 տող) (վեր.՝ ըստ համառ., տե՛ս* **խա** ... Աղէքսանդր**իա***)*
28 *VS* Տանիա *փխ* Տանիս *(վեր. Երեմեանի, տե՛ս բոլորագիր* **ս → ա**. *Պտղոմէոսի մօտ՝* Τάνις*)*
29 *V* Արաբացոց *փխ* Արաբացւոց *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*
30 *V* յԵգիպտոս *փխ* Եգիպտոս *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Բ.5, 17, Դ.25, 37)*
31 *V* ծա
32 *VS չիք* ի *(վեր., հմմտ. նախ. Բ.32, Դ.3, 23 եւն)*